

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Գ. Լ. ՈՒՒՍ Բ.

ՀԱՍՏՈՒԱԾ Ե.

ՀԱՄԵՐԱՇԽԱՎԱՐՈՒԹԻՒՆ

(Solidarisme)

Մեր մինչև ցարդ յիշած տնտեսագիտական դպրոցներուն շարքը չենք կարող փակել առանց յիշատակելու դպրոց մըն ալ որ թէպէտև տակաւին քանի մը տարիէ ի վեր ծնած որուն ազդեցութիւնը սակայն արագաբար մեծնալու վրայ է. տարիկայ ան դպրոցն է որ իրեն իբր խորհրդանշան ընտարած է Համերաշխութիւն (Solidarite) բառը:

Համերաշխութիւնը որ մարդոց մէջ իրարու հանդէպ փոխադարձ կախումն ունենալ կ'ենթադրէ և որուն դերը այնքան յստակօրէն և պայծառ կերպով ի յայտ կուգայ աշխատութեան բաժանումին, փոխանակութեան բաժանումին, փոխանակութեան, և այլնի մէջ, արդէն ի վաղուց անտի ուշադրութեան անուած էր և ծանուցուած Lerouxի, Bastiatի, Auguste Comteի նման նշանաւոր տնտեսագէտներու և իմաստասէրներու կողմանէ: Բայց, այդ ատենները, կ'ըսէ փրօֆէսէօր Ե. Ժիտ, համերաշխութիւնը կը նըկատէին իբր բնական օրէնք մը որ գործելու համար պէտք չունէր անհասնելու աջակցութեանը և ատիկայ միշտ բարիք մը չէին համարեր, որովհետև չարին մէջ եղած համերաշխութիւնը (օրինակի համար՝ փոխանցելութեան կամ ժառանգականութեան պատճառաւ հրահանգութեանց փոխանցումը) աւելի ակնյայտնի է քան բարւոյն մէջ եղած համերաշխութիւնը (օրինակի համար՝ հանրային անողնապահութեան մէջ): Եւ հակառակ կ'երևայ արդարութեան որ կը պահանջէ որ ամէն ոք

Որոտարորի գըրոյթներով դէպ ի դաշտ, Դէպ ի ծանօթ գետի մը շինջ հոսանքներն Ուր որ սովոր է լողանալ, բարձրավիզ Պերճաստորդ խայտանքներով, և բաշերն Ուսին վըրայ կը ծածանին, իր տնձին Վայելութեան վրայ նազելով սիգապանծ, Ծրնկերը զինք ճապուկ ճեպով՝ ճակերու Իրեն ծանօթ արօտներուն կը տանին. Այսպէս Պարիսը Պրիմանս՝ Պերզամոն Բարձր ամրոցէն փայլակնադէտ՝ զինավառ՝ Արփենըման առաջ կ'երթար՝ կայտելով Ու խաղալով ցընծութենէն՝ իր ճոխնեմ Ու ճեպ ի ճեպ ճրեկուն ժիր ճարներով: Անոխշապէս զըտաւ դիւցազն իր եղբայրն՝ Հեկտորն՝ երբ ան կը բաժնըէր այն տեղէն Ուր որ խօսքի էր բըռնուեր կընողն հետ:

Հախ դիւցատիպ Պարիսն անոր խօսեցաւ. «Մերելիք իմ, ուշանալովքս կարծեմ Արտորանքիդ արգելք եղայ, և չեկայ Ետև, ինչպէս դուն հրաման տըլած էիր ինձ»:

Պատասխանեց ցըրունճօճ պերճն Հեկտոր. «Ոչ մէկ արգար մարդ չի կըրնար պարսաւել Պատերազմի քու մըրցանքներդ, զի քաջ ես, Բայց դուն կամաւ կը մեղկանաս, ու կըսուիլ Զես յանձն առներ, և սիրտը շատ կը ցաւի Երբ քու վըրայդ նախատիքներ կը լըտեմ Տըրվադացոց բերնէն, որ քու պատճառաւ կը տուտպին և կը յոգնին չարաչար: Սակայն երթանք. ուրիշ տտնի կը խօսինք Ատոնց վըրայ, և անուշի կը կապենք, Եթէ Դիտ օր մը շնորհէ բարձրացնել՝ Ամահական սատուածներուն ի պատիւ՝ Ազատ բաժակը տուներնիս, ամբարբձ Աքայիկներն երբոր վանենք Տըրվայէն»:

Թարգմ. Հ. ԱՐՍԷՆ ՊԱՐԻՍԵԱՆ

Հ Ի Ն Ա Ռ Ա Մ Ն Ե Ր

Չխօսըն գիտութեամբ պարտ է դասաւել, ոսկով կշռել և ապա խօսել:

Լեզուն ճիւղ ունի քան զօճու. զմէկն մարգարիտ կու թափի, զմէկն ժահր:

Ի ծով աշխարհիս կ'ալեկոծիս՝ և մարգարիտ մի ի ձեռն չգերիք. ևս քեզ խրատ տուի ի ծովու յեզրն խորհուրդ արա:

պատասխանատու ըլլայ լոկ իւր սեփական արարքներուն համար:

Ընդհակառակը, համերաշխաւարական դպրոցը (Ecole solidariste) կ'ուզէ որ համերաշխութիւնը ըլլայ ուղղութեան կանոն մը, բարոյական պարտք մը, մինչեւ անգամ օրէնքով վաւերացուած իրաւասահայտ պարտականութիւն մը: Եւ որպիսի՞ պատճառաբանութեամբ: Սա պատճառաբանութեամբ որ համերաշխութիւնը՝ իբր բնական օրէնք, մեզի ցուցուցած ըլլալով որ մեր արարքներուն ամէն մէկը կ'երթայ անդրադառնալ մեր նմանեացը ամէն մէկուն վրայ և փոխադարձաբար, ատով մեր թէ պատասխանատուութիւնը և թէ վտանգի պատահականութիւնները չափազանցօրէն աւելցած կ'ըլլան: Եթէ թշուառներ կան, պարտինք օգնել անոնց, նախ՝ որովհետև մենք ենք հաւանականաբար մասնակի պատճառք անոնց թշուառութեանը, մեր կատարած կերպ կերպ գործողութեանց և ձեռնարկութեանց բերմունքովը և կամ մեր իրենց տուած օրինակովը, որով պատասխանատու ըլլալովնիս, մեր պարտքն է իրենց օգնել երկրորդ՝ որովհետև մենք գիտակցութիւնն ունինք որ մենք կամ մեր զաւակները պիտի ենթարկուին իրենց սեփական չարքներուն զոհերը ըլլալու իրենց հրահրութիւնը զմեզ պիտի թունաւորէ, իրենց բարոյից ապականութիւնը զմեզ պիտի անբարոյականացնէ և ստորնացնէ, որով մեր լաւ իմացուած շահը կը պահանջէ իրենց օգնել:

Ուրեմն, ըստ յիշեալ դպրոցի սկզբունքներուն, մարդկային ընկերութիւնը պէտք է փոխարկել տեսակ մը փոքրագրած նպաստի կամ օգնութեան մեծ ընկերութեան մը որուն մէջ բնական համերաշխութիւնը՝ զտուելով մաքրելով իւրաքանչիւրին բարի կամեցողութեամբ և կամ (եթէ այդ կարելի չըլլայ) օրինական բռնադատութեան միջոցով, իրթայ ըլլայ արդարութիւնը, ընկերութիւն մը, կ'ըսեմ, որուն մէջ իւրաքանչիւր ոք պիտի կրէ իւր բաժինը ուրիշներու վրայ ծանրացող բեռնէն, բայց և պիտի վայելէ նաև իւր շահարժինը ուրիշներու շահու տոկոսէն: Եւ ի պատասխանի անոնց որ այդ հայեցակէտով կը վստահանան նուաստացուցած ըլլալ անհատականութիւնը, այն կորովը որ ինքզինքին վրայ վստահիլ կուտայ, ինքնօգնութիւնը (անգլիացուց Self-Help) մէկ բառով, կը յարեն որ ուրիշի օգնելով անհատականութիւնը կը հաստատուի ու կը զարգանայ այնքան որքան ինքզինքին օգնելով:

Համերաշխաւարութեան և ընկերութեան մէջ եղած տարբերութիւնը սա է որ, առաջինը կը պահանջէ այն որ ներկայ ընկերային կարգուարքին հիմունքը կ'անուանեն, ստացուածքը, ժառանգութիւնը, արամագրելու ազատութիւնը, և անկէ յտանջ կ'անհաւասարութիւնները, բայց համերաշխաւարութիւնը կը մեղմացնէ այդ անհաւասարութիւնները՝ կամաւոր ընկերակցութեանց հազարաւոր կապերովը տկարները կապելով զօրաւորներուն: Այն կ'ընդունի, սակայն, պետութեան միջամտութիւնը ամեն անգամ որ՝ աշխատութեան, առողջապահիկ բնակարաններու մասին և կամ թէ ուսեստեղծներու վերայ եղած խարդախութիւններուն դէմ կարգ կանոն հաստատելու ձևին ներքեւ Օրէնքը կարողանայ առաջին առնուլ ժողովրդեան զանգուածներուն վստաստացումին, և նոյն իսկ երբ Օրէնքը՝ մի քանի ստիպողական ապահովագրութեան կամ նախատեսութեան ձևերուն ներքեւ՝ ձգտի ներմուծել ազգի մը զանազան դասակարգի մարդոց մտքին մէջ համերաշխութեան ոգին: Պէտք չէ մոռնալ որ պետութիւնն իսկ ուրիշ բան չէ եթէ ոչ մարդոց միջև համերաշխութեան ամենահին և ամենէն մեծի ձևը: Այնչուտ, համերաշխութիւնը որքան կամքով և յօստորաբամբ եղած ըլլայ այնքան ալ մեծ կ'ըլլայ իւր բոլոր բարոյական արժէքը, բայց և այնպէս Օրէնքին կողմէ հրամայուած համերաշխութիւնն ալ անհրաժեշտ է պատրաստելու համար գետինը որուն վրայ փթթելու սահմանուած է ազատ գործակցութիւնը (la-libre coopération):

Սոյն վարդապետութիւնը աշխարհքիս ամեն կողմէն իրեն կուսակիցներ քաշելու մեծագոյն առաւելութիւնն ունեցաւ, որոնց մէջ էն առաջ Fourierի և Lerouxի ֆըրանսական գաղափարապաշտ հին ընկերվարութեան հաւատարիմ Ֆիացածները, Auguste Comteի աշակերտները, Carlyleն, Ruskinն կամ Թօլստօյէն ներշնչուող միաթիբականները, հոգեպաշտ գիտունը, որպէս և նութապաշտը, հաւատացեալը, և այլն, և այլն: Եւ այդ վարդապետութիւնն է որ այսօր կը տիրէ Սօրպօնեան շրջանակներուն մէջ: Առկէ գատ, ան է որ ֆրանսական քաղաքական յոյժ կարևոր և մեծ կուսակցութեան մը՝ արմատական կուսակցութեանը (որուն զխաւար առաջնորդներէն մէկն է N. Léon Bourgeois¹) տուն տուաւ ընկերական և արնտեական յայտագիրը (Programme social et économique) որուն յիշեալ կուսակցութիւնը պէտք ունէր ինքզինքը զանազանելու համար միանգամայն թէ ան.

հատապաշտ ազատականութենէն (libéralisme individualiste) և թէ հաւարավար ընկերվարութենէն (Socialisme - collectiviste), որովհետեւ համերաշխավարութիւնը յիշեալ կուսակցութեան նըպատեց պահպանելու անհատական սեփականութեան սկզբունքը ճանչնալով հանդերձ ընչազուրկ դասակարգին իրաւունքները (les droits des prolétaires) և իբր նպատակ անոր ընդունել տուաւ վարձուորութեան (Salarariat) շնորհով մերժելով ճանդերձ իբր միջոց դասակարգերու պայքարը:

Այսու հանդերձ, թէպէտ և այս վարդապետութիւնը ուրիշին յայտագիր ներշնչեց, բայց և այնպէս ինքը տակաւին որոշ յայտագիր մը չունի. և ճիշդ այդ պատճառաւ է որ սակաւաթիւ են իրեն յարողները մասնագէտ տնտեսագէտներու շարքերուն մէջ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆՃԵԱՆ

1. N. Léon Bourgeois, ինչպէս իբր արմատականութեան մէջ (քաղաքական գեներն իրաւ) այսպէս ալ իբր համերաշխավարութեան ընդունումին մէջ քիչ մը ծայրայեղութեան զնացած է. ապաքէն, իբր La Solidarité և Essai d'une philosophie de la Solidarité անուն երկերուն մէջ, շանցած է իրաւասական (juridique) մէ մը տալ այդ վարդապետութեան, ըստ իրեն, ամեն մարդ պարտական կը ծնի հանգեպ մարդկային ընկերութեան՝ լուհեայն զաշխնքէ մը զօրութեանը (զոր quasi-contrat - զրեթէ - զաշխնք կամ կէս-զաշխնք կը կոչէ) և թէ այդ լուհեայն զաշխնքը յառաջ կուգայ՝ անմենքին աշխատութեան արդիւնքը եղող հաւաքական տառելութիւններէ որոնցմէ ան կը քաշէ իրեն համար (զոր մարդն ան պարտի սկսել վճարելու այդ պարտքը, մասնակցելով՝ օրինակի համար՝ իբր եղբայրներուն ապահով վարդութեանը, նեղութեան միջոցին նպատաներով, կըրթութեանը և զեռ որդուլիք ուրիշ ամեն ստակի օժանդակութեամբ): Նախապէս այդ պայմանը զուսցնելով է միտիայն որ տնտեսական ազատութիւնը և անհատական սեփականութիւնը կարող պիտի ըլլան ունենալ ազատ

ապարէզ:

Մեր հանճարի վարպետը, քրօֆէսօր Ե. Փեա, N. L. Bourgeoisի յիշեալ տեսութեանը ի պատասխանի, իրաւամբ կ'առարկէ որ առանց պարտատերի՝ պարտական չի կրնար գոյութիւն ունենալ: Արդ, դերին չէ զեանալ թէ մարդկային ընկերութեանը մէջ զո՞վ պէտք է պարտատեր անուանել և զո՞վ պարտական, Այդ կէտը շատ կարևոր է, սակայն: Առաջին ակնարկով կարելի է նմանազօրէ կարողանալ իբր պարտատեր. բայց այդ են թաղութիւնը հիմաւոր չէ, որովհետեւ բացարձակ կերպով կրնայ ըլլալ որ հարուստը իսկապէս համեմատաբար իբր առածնէր շատ աւելի տուած ըլլայ ընկերութեան (օրինակի համար մեծահարճար և բազմավաստակ հետեւի մը) և ստոր հակառակն ըլլալով՝ կրնայ ըլլալ որ աղքատն ալ մտաւորապէս կամ ֆիզիքապէս անկարող մը կ'զոյ ըլլալով, ընկերութեանն առածին փոխարէն անոր քնու ոչինչ տուած ըլլայ: Դարձեալ, այդ տեսութեան համեմատ, ի՞նչ պէտք է որ ըլլան տղաք, պարտատեր թէ պարտական:

